



Մխիթար Գոշ

Գիրք Դատաստանի

11

ԳԼՈՒԽ ԿԷ ՎԱՍՆ ՀՈՐՈՅ ԵՒ ՋՐՀՈՐՈՅ, ԵԹԷ ԱՆԿԱՆԻՑԻ Ի ԿԵՆԴԱՆԵԱՅ

Եթէ բանայցէ որ հոր կամ ջրհոր եւ ոչ խփէ, եւ անկանիցի անդ անասուն զինչ եւ իցէ, ի տիրոյ հորոյն տուժեացի արծաթ, եւ տացեն տեսոն նորա, եւ մեռեալ անասունն նորա լիցի: Եւ զայս դատաստան իրաւամբք պարտիմք պահել: Այլ թերեւս զանսուրբն իշովն նշանակեաց, զսուրբն՝ արջառովն:

ԳԼՈՒԽ ԿԸ ՎԱՍՆ ՀՈՐՈՅ ԵՒ ՋՐՀՈՐՈՅ, ԵԹԷ ԱՆԿԱՆԻՑԻ ՄԱՐԴ Ի ՆԱ

Եթէ անկանիցի այր կամ կին ի հոր բացեալ կամ ի ջրհոր եւ մեռանիցի, թէ ի տուէ իցէ՝ կէս արեան տուժեացի, իսկ եթէ ի գիշերի՝ բաւանդակ արիւնն: Նոյն լիցի յաղագս կանանց, ծառայից եւ աղախնից: Դատեալ լիցի քրիստոնեայն եւ այլազգին: Որպէս ի գիշերի՝ լիցի կոյրն, եւ արբեալն, եւ մանուկն:

ԳԼՈՒԽ ԿԹ ՎԱՍՆ ԹԷ ՀԱՐԿԱՆԻՑԷ ՅՈՒԼ ՅԱՆԱՍՆՈՅ

Եթէ հարկանիցէ ցուլ զկով կամ զոչխար կամ զայլ ինչ յայսպիսեաց եւ սպանանիցէ, իբր զի ոչ գիտէր զցուլն հարկանող, կէս գնոյն տուժեացի, եւ փոքրագոյն կենդանին սպանեալն իւրում տեսոն լիցի, իսկ մեծն բաժանեացի,

յորժամ գոյգ զգինսն ունիցին, եւ վաճառեցի հարկանողն: Իսկ եթէ բողոքեալ իցեն, եւ չիցէ ի միջոյ բարձեալ, զբաւանդակն տուժեցի: Նոյն լիցի եւ յանսուրբն, այսինքն՝ ի բեռնակիրսն:

ԳԼՈՒԽ Զ ՎԱՍՆ ԳՐԱՍՏԻՑ, ԵԹԷ ՉՄԻՄԵԱՆՍ ՀԱՐԿԱՆԵՆ

Եթէ ձի, կամ էջ, կամ ջորի հեղձուցանելով կամ ոտիւք գմիմեանս սպանանեն եւ կամ այլ ինչ վնասս առնեն, եթէ գիտելով տեսոն զխստութիւն անասնոյն եւ ոչ զգուշացաւ՝ զբաւանդակն տուժեցի, ապա թէ անգիտանալով՝ զկէս վնասուն: Նոյնդ լիցի, եթէ այլ ինչ ի կենդանեաց սպանանիցի կամ վնասեցի:

ԳԼՈՒԽ ԶԱ ՎԱՍՆ ԳՐԱՍՏՆՈՅ, ԹԷ ՀԱՐԿԱՆԵՆ ՉՄԱՐԴԺ ԵՒ ՎՆԱՍԵՆ

Եթէ գրաստ հարկանէ գմարդ եւ վնասէ, եթէ բողոքեալ իցեն, եւ նա ոչ զգուշացոյց՝ զբաւանդակն տուժեցի, ապա թէ անգիտանալով եւ կամ զգուշացուցեալ՝ զկէս վնասուն եւ գմահուանն: Իսկ եթէ ոչ վնասեցի եւ ոչ մեռանիցի, զխափանածոյն եւ զբժշկութեանն տուժեցի. գիտելով եւ ոչ զգուշացուցանելով՝ զբաւանդակն, եւ ոչ գիտելով եւ զգուշացուցանելով՝ զկէսն: Իրաւացի կարծեմ յամենայն ոչ վնասեալսն եւ ոչ մեռեալսն զխափանածոյն եւ զբժշկութեանն զի տուժեցի: Իսկ զապաշխարութեանն յամենայնսն տեսցեն վարդապետք, զի աստ միայն զդատաստանին փութամք հատուցանել զիրս, զի հարկաւորաբար զիրն հայցէ զիրս դատաստանի:

ԳԼՈՒԽ ԶԲ ՎԱՍՆ ԳՐԱՍՏԻՑ, ԹԷ ՀԱՐԿԱՆԵՆ ՉՈՔ ՅԻԻՐՈՅՆ

Եթէ ծառայ, կամ կին, կամ աղախին, կամ ուստր, կամ դուստր եւ կամ այլ ոք յիրոցն սպանաւ կամ վնասեցաւ, թէ անգիտանալով եւ կամ զգուշացոյց՝ անպարտ լիցի ի դատաստանէ: Իսկ եթէ իւրքն բողոքեցին, եւ նա ոչ եբարձ ի միջոյ եւ ոչ զգուշացոյց, դատաստան լիցի ի վարդապետաց՝ զապաշխարութիւն սահմանել զկամաւորի եւ զակամայի: Եւ այդ այդոցիկ իրաւունք կարծին:

ԳԼՈՒԽ ԶԳ ՎԱՍՆ ԳՈՂՈՅ ՈՉԽԱՐԱՅ ԵՒ ԱՅԼՏԵՂ ԱՆԱՍՆՈՅ ՉԻՆՉ ԵՒ ԻՏԷ

Իսկ եթե գողացի ոք արջառ կամ ոչխար, թե սպանցե կամ վաճառեցե, հինգ արջառ ընդ միոյ արջառոյն տուժեցի, եւ չորս ոչխար՝ ընդ միոյ ոչխարին: Ապա թե ոչինչ գտանիցի առ նմա, վաճառեցի փոխանակ գողութեան իւրոյ: Իսկ եթե ընթոնեցի, եւ գտցի ի ձեռս նորա յարջառոյ եւ յիշոյ մինչեւ ցոչխար կենդանի, կրկին տուժեցի: Յայտնի է դատաստանս, զի գկորուսեալս հինգ եւ չորս հրամայե հատուցանել, եւ զոչ կորուսեալս՝ միայն կրկին: Եւ զայս իրաւունք Օրինացս ըստ այսմ պահեսցուք:

ԳԼՈՒԽ ՀԴ ՎԱՍՆ ՈՐ ԶՏՈՒՆ ՊԱՏԱՌԵՆ ԳՈՂՔ

Իսկ եթե յական գտցի գող եւ խոցեալ մեռանիցի, չէ այն նմա ի սպանութիւն: Ապա թե արեւն ի վերայ նորա ծագեցի, մահապարտ է, փոխարէն մեռցի: Զի ընդ խաւար գիշերոյ անգիտացեալ, ոչ համարի մեղս սուրբ Օրէնքն, իսկ ընդ լուսոյ ծագիլն՝ իբր կամաւոր սպանող դատի իրաւամբք, զի մարդագողաց հրամայեցաւ սպանանիլ, եւ մեզ կամաւորի կամ ակամայի ապաշխարութիւն սահմանեցի, եւ փրկանք լիցի, որպէս ցուցեալ է: Եւ գողունն կորուսեալ՝ չորրորդ հատուցի, եւ ոչ կորուսեալն՝ կրկին, որպէս յայլսն:

ԳԼՈՒԽ ՀԵ ՎԱՍՆ ԳՈՂՈՅ ԵԿԵՂԵՑԵԱՅ

Զեկեղեցոյսն գողացեալ եւ կորուսեալ կամ վաճառեալ, որոց ոչ իցե դարձ, հինգերորդ հատուցե, եւ զոչ կորուսեալն՝ կրկին: Եւ զապաշխարութիւնն եցոյց կանոնք:

ԳԼՈՒԽ ՀԶ ՎԱՍՆ ՈՐ ԶԱՐՏ ԵՒ ԶԱՅԳԻ ԱՐԱԾԵԼ ՏԱՆ ԱՆԱՄՆՈՅ

Եթե արածել տայ ոք զարտ կամ զայգի խաշանցն, յիւրմէ անդոյ անտի տուժեցի ըստ արդեանն: Ապա թե զամենայն իսկ անդսն արածիցե, զընտիր կողմն այդոյ իւրոյ տուժեցի: Եւ այս ըստ արդեանն դարձեալ լիցի իրաւամբք, եւ այս հաստատեցի դատաստան ըստ մեզ:

ԳԼՈՒԽ ՀԷ ՎԱՍՆ ՈՐՔ ԱՅՐԵՆ ՇՐՈՎ ԶՎԱՍՏԱԿՍ

Իսկ եթե ելանիցե հուր եւ գտանիցե փուշ եւ ընդ նմին զվաստակ այրիցե՝ կամ զկալ, կամ զօրան, կամ զանդ, տուժելով տուժեացի՝ որ զհուրն հանեալ իցե: Եւ զայս դատաստան քննութեամբ հրամայե սուրբ Օրէնքս Աստուածոյ դատել, թէ ո՞ր արդեօք հանեալ հուրն եղեւ՝ մե՞րձ թէ հեռի, յանտա՞նս թէ ի դաշտի, եւ յունմէ՝ ի բարեկամէ՞ թէ ի թշնամոյ, պատահմա՞մբ թէ կամաւ, մանու՞կ թէ ծեր, եւ այլ այսպիսի, զի զայս յայտ առնէ տուժելով տուժիլն: Եւ մեզ այսոցիկ հետեւելի է: Ջի թէ կամաւ իցե, կրկին տուժեացի: Ապա թէ որ մերձ ի կալ կամ յօրան հանիցե հուր եւ ոչ զգուշացեալ շիջուցե, զբաւանդակն տուժեացի, իսկ եթէ ի հեռաստանէ ի դաշտէն զայցե՝ զկէս վնասուն եւ որ ինչ այսոցիկ հետեւին: Նմանապէս թէ յանասնոց այրիցի, կամ ի մարդկանէ, կամ տուն, կամ այլ ինչ ի շինուծոց, կամ հանդերձ եւ որ ինչ նման սոցին, այնոքիւք եւ զայս դատեացեն:

ԳԼՈՒԽ ԶԸ ՎԱՍՆ ՈՐ ԻՐՔ ՏԱՆ ՊԱՀ Ի ՄԱՐԴ, ԵՒ ԿՈՐՈՒՍԱՆԷ ԿԱՄ ԳՈՂԱՆԱԼ ՏԱՅ

Իսկ եթէ որ ընկերի իւրում տացե արծաթ կամ այլ ինչ կարասի զիւր յաւանդ, եւ գողացի ի տանէ առն, եթէ գտցի որ գողացան՝ կրկին տուժեացի, ապա թէ ոչ գտցի որ գողացան, մատիցե տէր տանն առաջի Աստուծոյ եւ երդուիցե, թէ իւր չիցե նենգեալ ամենեւին զաւանդ ընկերի իւրոյ: Ըստ ամենայն վնասակար բանի՝ յարջառոյ եւ յիշոյ, յոչխարէ եւ ի հանդերձոյ եւ յամենայն կորստենէ, յորում վնասակարութիւն առնիցեն, որ զինչ եւ իցե՝ առաջի Աստուծոյ եկեացեն ի դատաստան երկոցունց, եւ որ որ ի նոցանէ ըմբոնեացի ի ձեռն Աստուծոյ, կրկին տուժեացի ընկերի իւրում: Անփոփոխ եւ այս դատաստան պահելի է: Գողն գտեալ՝ կրկին տուժեացի: Եւ երդման ցուցեալ է օրինակն մեզ, եւ երդուեալ՝ ոչ տուժի: Եւ որ որ ըմբոնի՝ կրկին տուժի, կամ զի սուտ երդուաւ՝ յայտ եղեւ, կամ զի ոչ երդուեալ՝ ցուցաւ սուտ լինել, իսկ միսն՝ զի զրպարտող եղեւ սուտ:

ԳԼՈՒԽ ԶԹ ՎԱՍՆ ՊԱՀԵՍՏԻՑ ՉՈՐՔՈՏԱՆԵԱՅ

Եթէ տացե որ ընկերի իւրում էջ, կամ եզն, կամ ոչխար եւ կամ այլ ինչ անասուն ի պահեստ, եւ բեկցի, կամ մեռցի, կամ գերի վարեացի, եւ ոչ որ զիտասցե, երդումն Աստուծոյ լիցի ի մէջ երկուցն. եթէ նենգանօք ինչ ոչ իցե երթեալ ամենեւին ընդ աւանդ ընկերի իւրոյ, ապա յանձն առցե տէրն նորա, եւ մի՛ տուժեացի: Իսկ եթէ

գողութեամբ գողասցի ի նմանէ, տուժեցի տեառն նորա: Ապա թէ գազանաբէկ լիցի, անձեզ գտերն ի գէշ անդ եւ մի տուժեցի: Յոյժ իրաւամբք եւ գայս կալցուր դատաստան, զի ի պահեստ տալ վարձու է: Յաղագս որոյ զգողօնն հրամայէ տուժել, իսկ գաւանդն՝ ոչ եւս:

ԳԼՈՒԽ Զ ՎԱՍՆ ՈՐ ԱՌՆՈՒ ԻՐՔ Ի ԲԱՆ ԵՒ ՎՆԱՍԷ

Եթէ խնդրէ որ անօթ յընկերէ իւրմէ եւ վնասեցէ, կամ մեղցի եւ կամ գերի գնասցէ, եւ տէր նորա ոչ իցէ ընդ նմա, տուժելով տուժեցի, ապա թէ տէրն նորա ընդ նմա եղիցի, ոչ տուժեցի. ապա թէ ընդ վարձու տուեալ իցէ, ընդ վարձուց իւրոց եղիցի նմա: Տուժելով տուժելն ճշգրտի քննութեամբ լիցի: Ըստ մերոց եղիցին եւ այս:

ԳԼՈՒԽ ԶԱ ՎԱՍՆ ՈՐ ԶԿՈՅՍ ԽՕՍԵԱԼ ԽԱԲԵՍՅԵՆ ՄԱԼԱԶՔ

Եթէ խաբեցէ որ զկոյս խօսեցեալ եւ ննջեցէ ընդ նմա, վարձանօթ վարձեցէ գնա ի կնութիւն իւր: Եւ եթէ ոչ առնուցու յանձն հայրն տալ գնա նմա ի կնութիւն, տուժեցի արծաթ հօր նորա, որպէս իցեն վարձանք կուսից: Գիտելի է եւ գայս դատաստան, զի խաբեալ եւ հաւանեալ ոչ մեռանին, թէպէտ եւ խօսեալ է, որպէս գայն, որ բռնաբարիցէ զխօսեալ, այլ հրամայէ վարձանօթ վարձել, զի եւ ոչ հաւանութեամբ եւ խօսիք ծնողացն է վարձելիք, այլ տուրք կամօթ, եւ զոչ հաւանիլ հօրն՝ վարձիլ որպէս օրէն է կուսից հօր հայցել. եւ այս է տուժիլն: Իսկ ըստ կանոնաց գնոյն հրամայէ առնուլ կին, ընդ որ հաճեցան: Ապա թէ ոչ է աղջկանն հայր կամ մայր եւ կամ նոյն կամիցի, ըստ վարձանին, զոր սովոր են առնուլ ծնողք կուսիցն, տուժեցի: Ապա թէ երիտասարդն կամ իւրքն ոչ կամին առնուլ, կրկին լիցի տուժն: Եւ տուժն՝ ծնողացն եւ ոչ տերանցն՝ ըստ օրինացն:

ԳԼՈՒԽ ԶԲ ՎԱՍՆ ՈՐ ԻՐՔ ՏԱՆ Ի ՓՈԽ

Եթէ արծաթ փոխ տացես եղբօր քում, որ աղքատն իցէ առ քեզ, մի՛ ճեպեցես գնա եւ մի՛ արկանիցես նմա տոկոսիս: Հին կտակարանքն եւ Նորս յայտնիկ միաբանին՝ ի բաց բառնալ զվաշխ եւ զտոկոսիս: Ոչ թէ աստ զտոկոսիս յիշատակելով՝ զվաշխ թողացուցանէ, զի զծայրն բառնալով ընդ նմին եւ զարմատն բառնայ: Եւ որ ինչ ի Նոր կտակարանքս է սաստն, աւելորդ է, իբր

գիտողաց, երկրորդել, զի թէ Օրէնքն ոչ հրամայէ ճեպել, ո՞րչափ եւ Նորա: Եւ փոխ ասացաւ, զի անդրէն հատուցի: Արդ, իրաւունք դատաստանի լիցին՝ ներմամբ առնուլ զգլուխն, եւ վաշխ լիցի հատուցումն ի հանդերձեալն: Ապա թէ կար իցէ փոխատողին, տացէ փոխատուին գնոյնն՝ գլուխն մնալ առ նմա գնոյնչափ. եւ աստ ըստ կարի լիցի, զի Աստուծոյ իսկ ինքն է դատաստանդ՝ ոչ առնուլ վաշխ եւ տոկոս: Եւ գիտելի է, զի թէ որ գդատաստանն Աստուծոյ թիրէ, վնասէ զհոգին՝ ի հանդերձեալ հատուցմանէն զրկելով: Ապա թէ որ պատճառէ ոչ հատուցանել անվաշխն, դատ լիցի, ի հասանելն գլխոյն՝ թողութիւն լիցի: Եւ որդոց, զկնի մահուան հարցն, մի՛ լիցի զվաշխ հատուցանել, բայց միայն զգլուխքն, զի բնաւին ոչ է ըստ իրաւանց: Եւ այդ օրինադրութիւն է, միանգամայն եւ դատաստան:

ԳԼՈՒԽ ԶԳ ՎԱՍՆ ԳՐԱԻԻՑ

Եթէ որ ի գրաւ առնուցու գուրուք գտուն, կամ զայգի, կամ զհող, կամ զայլ ինչ այսպիսի եւ պատահի յամել, զգլուխն որքանութեան առեալ անվաշխ՝ անդրէն դարձուցէ զգրաւն: Եւ թէ լիցի աւելի կերեալ, եւ զայս եւս հատուցէ: Եւ գոր ինչ ծախեալ իցէ ի նմանէ, ի գլուխ իւր հաշուեսցի, յորժամ յաղագս անձեռնահասութեան տեսոն չիցէ դարմանեալ զգրաւ իւր: Դոյնալէս լիցի, թէ ինչ ի կենդանեաց իցէ: Եթէ ինչ ի հանդերձից իցէ գրաւն եւ ի նմանեաց սոցին, եւ մաշիցէ, ի գլուխն իւր լիցի պակասեալ: Եւ զոսկեղէն եւ զայլ ինչ այսպիսի զգողացեալ եւ զկորուսեալ, եթէ չիցէ իւր նենգեալ եւ երդմամբ հաստատիցէ, իւրում տեսոն լիցի, ապա թէ իւր նենգեալ իցէ եւ կորուսեալ՝ չորեքպատիկ տուժեսցի: Իսկ եթէ ի ձեռին իցէ եւ ստիցէ, կրկին տուժեսցի: Իսկ յաւարի տարեալն՝ իւրում տեսոն լիցի: Չծառ հատեալ եւ զցանկ այրեալ զայգոյ, գտան եւ զայլ ինչ զվնասու գրաւի, եթէ տեսոն պատճառաւ իցէ, իւրում տեսոն լիցի, ապա թէ առ որում գրաւն իցէ՝ այնն լիցի: Չվայրապար վնասեալն եւ զբեկեալն յանասնոց ի գլուխ իւր կալցի, եւ զհասարակաց զմեռեալն՝ իւրում տեսոնն: Եթէ Օրէնքն զգրաւ ոչ տայ օթել, ո՞րչափ եւս հրաժարեցուցանէ եւ ի վաշխից գրաւից:

ԳԼՈՒԽ ԶԴ ՎԱՍՆ ԱՅՐԵՑՈՂԱՅ ՏԱՆ

Եթէ կամաւ որ հոր դիցէ տան եւ ընթոնեացի, որ եղն գհորն, տեսցեն՝ զի թէ ի մարդկանէ մեղցի ի հորն, խրատ առցէ ի ձեռն, թէպէտ եւ մահու արժանի է ըստ Օրինացն, թերեւս ապաշխարութեան հասանիցէ: Եւ տուծ լիցի. թէ կարող իցէ՝ զբաւանդակն պահանջեացի արիւն, ապա թէ ոչ՝ ըստ կարի լիցի: Եւ տուծին խրատ ոչ է, ոչ աստ եւ ոչ յայլսն, այլ անատակին խրատ եւ ոչ է տուծն ի դէպ. ըստ արժանոյն զխրատն արասցեն, այսինքն՝ ըստ պատշաճին: Իսկ թէ յանասնոց իցէ, չորեքպատիկ հատուցի: Ապա թէ ամբար խոտոյ, կամ օրան կամ յայսպիսեացս՝ կրկին լիցի տուծն: Նոյն լիցի ցանկոյ եւ նմանեաց նորին: Այսպէս՝ հանդերձիցն եւ նոցին նմանեացն:

ԳԼՈՒԽ ԶԵ ՎԱՍՆ ՏՆԿԱՀԱՏԱՅ

Շարժեալ որ սատանայական ցասմամբ հարկանիցէ գտունկ ուրուք, եւ յայտ ճշգրտի զայցէ, դատաստան լիցի. դնել գտունկն հատանողին եւ յիւրոցն զամսն, ցորքան անպտուղ իցէ տունկն, տուծիլ նովին չափովն, ապա թէ իւր չիցէ՝ ըստ գնոյն լիցի: Զի Օրէնքն եւ ոչ զթշնամեացն հրամայէ, այսինքն՝ զայլազգեացն, հատանել գտունկն: Եւ այդ այսպէս լիցի իրաւամբք:

ԳԼՈՒԽ ԶԶ ՎԱՍՆ ՈՐ Ի ՊԱՀ ԻՐՔ ՏԱՆ, ԵՒ ԶՈՎՈՂՈՒԹԵԱՆ, ԵՒ ՈՐ ԽԼԷ ԶԸՆԿԵՐԻՆ, ԿԱՄ ԳՏԱՆԷ ԶԿՈՐՈՒՍՏ ԵՒ ԿԱՄ ԿՈՏՐԷ

Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ. անձն որ եթէ մեղիցէ եւ արհամարհելով անարգիցէ զպատուիրանս Աստուծոյ, եւ ստիցէ ընկերի իւրում, եւ եթէ եզիտ կորուստ ինչ, եւ ժխտիցէ ի վերայ նորա եւ երդնուցու սուտ վասն միոյ իրիք յամենայնէ, զոր եւ առնիցէ մարդ առ ի մեղանչելոյ նորա նորօք, եւ եղիցի յորժամ մեղանչիցէ եւ յանցանիցէ, հատուցէ զյափշտակութիւնն, զոր յափշտակեաց, եւ զվնասն, զոր վնասեաց, կամ զաւանդն, որ աւանդեցաւ նմա, կամ զկորուստն, զոր եզիտ: Յամենայն իրաց, զոր երդուաւ սուտ, տուծեացի զգլուխն եւ զհինգերորդ մասն յաւելցէ ի նոյն, եւ ոյր իցէ՝ հատուցէ նմա յաւուր, յորում յանդիմանեացի: Աստուածախօսութիւնս դատաստանի հաստատուն եւ յեկեղիցի կացցէ, քանզի նոյն իսկ է Տեսոն: Բայց խոյին քաւութեամբ եցոյց, եթէ որք միանգամ իրք դատաստանի են եւ տուծին, պէտք են եւ ապաշխարութեան: Եւ քանզի կանոնք եւ դատաստանք ի միմեանց այնու բաժանին, զի ծածուկ եղեալ յանցանս, որոց եւ

պէտք իցեն տուժի, հրամայէ առնել ողորմութիւն, իսկ դատաստան թէ եւ տուժէ,
ոչ բառնայ գապաշխարութիւն: Սակայն ներմամբ եւ փորձի լիցի իմաստնոց,
յաղագս որոյ յամենայն իրս դատաստանի գապաշխարութիւն ի կանոնս թողաք: